ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը՝ ուղղված ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շրջանավարտներին

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի սիրելի շրջանավարտներ,

Այսօր խորհրդանշական օր է, քանի որ մենք ճանապարհում ենք մեր բուհի Եղեգնաձորի մասնաճյուղի առաջին շրջանավարտներին: Մենք ուրախությամբ և հպարտությամբ ենք արձանագրում մասնաճյուղի շրջանավարտների առաջին սերունդը թողարկելու իրողությունը և վստահ ենք, որ դուք ձեր կյանքի նոր փուլը թևակոխում եք գիտելիքներով զինված:

Անցած տարիները կարևոր են եղել ձեզ համար, քանի որ դրանք եղել են գիտելիքներ ձեռք բերելու և մասնագիտանալու տարիներ: Անցած տարիները չափազանց պատասխանատու են եղել նաև մեզ համար, քանի որ դուք մեր բուհի Եղեգնաձորի մասնաճյուղի առաջին շրջանավարտներն եք: Բուհի մասնաճյուղի զարգացումը, այստեղ ևս կրթության որակի բարձրացումը մեր ռազմավարական նպատակներից են, որոնք իրագործելու համար բավական ջանքեր են ներդրվել և դեռ կներդրվեն: Հուսով եմ, որ ուսումնառության տարիները արդարացրել են ձեր սպասումները և տվել այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մասնագետ դառնալու համար:

Սիրելի շրջանավարտներ, այս նշանակալի օրվա առիթով շնորհավորում եմ ձեզ, ցանկանում ամենայն բարիք, մասնագիտական և անձնական հաջողություններ: Ցանկանում եմ, որ մեր բուհում ստացած կրթությամբ դուք ձեր արժանի տեղը գտնեք աշխատաշուկայում և դառնաք

պահանջված մասնագետներ: Հատկապես կարևորում եմ, որ դուք աշխատեք ձեր մարզում և ձեր ստացած գիտելիքներով նպաստեք մարզային ենթակառուցվածքների զարգացմանը: Չմոռանաք նաև պահպանել բուհի հետ հետադարձ կապի բարի ավանդույթը:

Բարի երթ և կանաչ ճանապարհ ձեզ, սիրելի շրջանավարտներ:

ՀՊՏՀ ռեկտոր՝

Կորյուն Աթոյան

12.07.2012թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ